և կորուսին զգիրս, թերեւս և շատք բռնութեամբ Պարսից թագաւորաց թէ և կացին մնացին ի բնիկ հայրենիս, բայց փոխեցին զհայրենի կրօնս և եղեն մահմետականք, արդէն միով բանիւ կոչին Մահմետականք և բնակին ի լերինս և ի դաշտս աւելի քան զհարիւր հազար տունս։ Ի նշանաց մնացելոց ի խորաձորս Կովկասու, յանտառախիտ մայրիս ի լայնարձակ դաշտս, հաւանական թուի թէ՝ նոքա իսկ են հատուածք ազգին Աղուանից։

Ի վերջոյ ի տկարանալ ազգին Աղուանից, և զօրանալ ամիրայից տաճկաց, բռնադատեալ բնակչաց ընկալան զօրէն Մահմէտի որպէս և գրէ Դարբանդնամայն"։

Աղուանից ազգի անցեալ կեանքի համար կամելով մի համառօտ տեղեկութիւն գրել, կարեւոր համարեցի Աղուանից պատմիչ Մովսէս Կաղանկատուացւոյ պատմութեան համառօտ քաղուածը դնել այս տեղ, զոր գրել է Հ. Գարեգին Զարբանելեան իւր աշխատասիրած գրքի մէջ, որ անուանւում է «Հայկական հին դպրութեան պատմութիւն". Դ - ԺԴ. դար. Վենետիկ. 1886. յերես 424 430) որ է այսպէս.

ՄՈՎՍԷՍ ԿԱՂԱՆԿԱՏՈՒԱՑԻ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԱՂՈՒԱՆԻՑ

Այս ազգս որ հին Կովկասեան ազգաց մէջ զօրաւորագոյնն էր, մինչեւ մեծին Պոմպէոսի զէնքերն իր վրայ դարձնել տուաւ, և ծանօթ Յունաց և Հռովմայեցւոց, կ'արժէր իր առանձին պատմիչն ունենալ. բայց թէ ինչուան մեր հեղինակին ժամանակ ունեցեր էր ոճով ժամանակագիր մը, շատ հաւանական չէ, վասն զի կէս լեռնցի և բարբարոս խոտալեզու ազգ մ'էր. ծագումն ալ ոչ շատ ծանօթ. սակայն մերձաւորութեամբ մեր ազգին և ազգախառնութեամբ՝ ընտելացած քաղաքական օրինաց, եւս առաւել Քրիստոնէական կրօնից ընդունելութեամբ, զոր թէպէտ և անմիջապէս Առաքելոց աշակերտաց քարոզութեամբ ընդունած էր, ըստ աւանդութեան պատմչիս և այլոց,